ԱՐՄԵՆ ԵԴԻԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1965թ. դեկտեմբերի 16-ին, Երևանում:

Կրթություն և վերապատրաստում՝

1982-1987թթ. Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետ (ինժեների որակավորում),
1991-1993թթ. ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնում ասպիրանտուրա,
1993-1994թթ. Հակամարտությունների վերլուծության և կարգավորման ինստիտուտ, ունկնդիր, Ջորջ Մեյսոնի համալսարան, Ֆրենֆաքս (ԱՄՆ),
2001թ. Սևծովյան տարածաշրջանի անվտանգության բարձրագույն գործառնական ծրագիր, Քենեդու անվան կառավարման դպրոց, Հարվարդի համալսարան,
2005թ. Ջորջ Ս. Մարշալի անվան անվտանգության հարցերի եվրոպական կենտրոն, եվրոպական անվտանգության մասին ծրագիր,
2006թ. Երկխոսության գործընթացների դյուրացում և միջնորդության ջանքեր դասընթաց, Ֆոլկ Բերնադոտի ակադեմիա,
2006թ. ՆԱՏՕ-ի պաշտպանության քոլեջ, գեներալների, սպաների և դեսպանների դասընթաց:

Աշխատանքային գործունեություն՝

1987-1988թթ. ինժեներ «Սոյուզգազպրոեկտ» նախագծային ինստիտուտում,
1988-1991թթ. սոցիոլոգ Հասարակական կարծիքի ուսումնասիրության հետազոտական կենտրոնի (ВЦИОМ) հայաստանյան մասնաճյուղում,
1994-1997թթ. դասախոս ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնում,
1994-1996թթ. ԱԳՆ ԱՄՆ և Կանադայի վարչության երրորդ քարտուղար,
1996-1997թթ. ԱԳՆ ԱՄՆ և Կանադայի վարչության երկրորդ քարտուղար,
1997-1999թթ. Կանադայում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար,
1997թ. Կանադայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար,
1999-2000թթ. Կանադայում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար,
2000-2001թթ. ԱԳՆ Ամերիկայի վարչության պետ,
2001-2005թթ. ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար,

2005-2006թթ. ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության խորհրդական,
2006-2010թթ. ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության պետ,
2010-2017թթ. Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության առաքելության ղեկավար,
2017- 2020թթ. ԱԳՆ միջազգային անվտանգության վարչության պետ:

Դիվանագիտական աստիճան՝
Արտակարգ և լիազոր դեսպան:

Օտար լեզուների իմացություն՝
Անգլերեն, ռուսերեն:

Ընտանեկան կարգավիճակ՝
Ամուսնացած է, ունի երկու դուստր:

2020թ. հուլիսի 24-ին *ՀՀ նախագահի հրամանագրով Բուլղարիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Սոֆիա):*